Նախագահ
Ռասսել Մ. Նելսոն

«ՏԱՃԱՐԸ ԴԱՐՊԱՍՆ Է ԱՅՆ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԱՍՏՎԱԾ ՊԱՏՐԱՍՏԵԼ Է ՄԵԶԱՆԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՀԱՄԱՐ:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

ՏԱՃԱՐԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարտ ամսին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին գնեց Կիրթլենդի տաճարը: Այս տաճարը Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման կարևոր մասն էր:

1836թ. ապրիլի 3-ին Հիսուս Քրիստոսը հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին Կիրթլենդի Տաճարում: Փրկիչն ընդունեց տաճարը որպես Իր տուն: Ապա Նա խոստացավ. «Ես ողորմությամբ **կհայտնվեմ** իմ ժողովրդին այս տանը» (Վարդապետություն եվ Ուխտեր 110.7): Այս խոստումն այսօր վերաբերում է յուրաքանչյուր տաճարի:

Տաճարում դուք կարող եք ստանալ աղոթքի պատասխանները: Դուք կարող եք ստանալ նաև հավատք, ուժ, մխիթարություն, գիտելիք և զորություն: Տաճարում անցկացրած ժամանակը կօգնի ձեզ ունենալ սելեստիալ մտածելակերպ և տեսնել, թե ով եք դուք իրականում և ինչ կարող եք դառնալ: Դա կօգնի ձեզ հասկանալ, թե դուք որքանով եք համապատասխանում Աստծո հոյակապ ծրագրին: Ես ձեզ դա խոստանում եմ: ●

Հայտնվել.
ցույց տալ կամ հայտնի դարձվել

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՌԵԲԵԿԱ ԳՐԻՍԻ

Վերցված է «Ցնծացեք քահանայության բանալիների պարգևով» ելույթից, Լիահոնա, *մայիս 2024, 119-21:*

ԻՆՉ Է ԿԻՐԹԼԵՆԴԻ ՏԱՃԱՐԸ

Կիրթլենդի տաճարը կառուցվել է 1836 թվականին Կիրթլենդում (ԱՄՆ, Օհայո): Դա վերականգնված եկեղեցու առաջին տաճարն էր:



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ. ԿՏՐԵԼ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼ

Կտրեք Կիրթլենդի տաճարի եզրերը: Ապա ծալեք կետագծված տողերից յուրաքանչյուրը և կողքերն ու տանիքը միմյանց ամրացրեք կպչուն ժապավենով:

Ավելի ուշ Եկեղեցու անդամները ստիպված եղան թողնել տաճարն ու հեռանալ՝ արևմուտք շարժվելու համար: Մեկ այլ եկեղեցի երկար տարիներ հոգացել է շենքի մասին: Վերջերս Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին գնել է տաճարը: